

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Արարս /Էջմ./ համայնքի ղեկավարի 2014թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ

Հարգելի համայնքի բնակիչներ և պարոն Ա. Այվազյան, թույլ տվե՛ք Ձեր ուշադրությանը ներկայացնել Արարս համայնքի ղեկավարի, ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի 2014թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը ընկած հատվածում կատարված աշխատանքների և միջոցառումների ամփոփիչ տնօրենկատվությունը:

Արարսի գյուղապետարանը իր գործունեությունը իրականացնում է «Տնդական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համաձայն: Մեր համայնքը ունի 530 տնտեսություն, բնակչությունը՝ 2054 մարդ, մոտ 1302 ընտրող, 1290հա հողատարածություն, որից ոռոգվող 682հա հողատարածք: 2014 թվականին մշակվել է շուրջ 219.6 հա հողատարածքներ, անգլայ տարվա համեմատությամբ 12 հա ավել: Գյուղում մշակվում են գյուղատնտեսական տարբեր կուլտուրաներ:

### Ըստ բնագավառների կատարվել են

#### ֆինանսական բնագավառում

կազմակերպվել է հողի հարկի և գույքահարկի հավաքագրման աշխատանքները: Նախատեսված 9174.94 հազար դրամի փոխարեն հավաքագրվել է 1913.6 հազար դրամ սեփական նկամուտ, այսինքն ապահովել ենք սեփական նկամուտների հավաքագրման 35 տոկոս կատարողական:  
Գյուղապետարանը աշխատավարձի և նվաճման հարկի պարտքեր չունի:  
Համայնքի հաշվի համարին կուտակվել է 14459.8 հազար դրամ գումար, որը նախատեսված է ծախսել համայնքի հիմնախնդիրների լուծման վրա:

#### Կրթության, մշակույթի և նրիտասարդության հետ տարված աշխատանքների բնագավառում

Համայնքում գործում են պարի խմբակ, խմբակում կան 35 աշակերտներ:  
Գործում է նաև Քինգ-բորսինգի խմբակ, որին մասնակցում են թվով 40 աշակերտներ:  
Խմբակի աշակերտները մասնակցում են տարբեր Հանրապետական մրցումներին:  
Համայնքում գործում է գրադարան, որից օգտվում են 100-ից ավել տարբեր տարիքի բնակիչներ:

#### Պաշտպանության բնագավառում

կազմակերպվել է զինապարտների հաշվառման, նրանց բուժզննման աշխատանքները: Ուժնդագվել է կապը զինկոմի հետ, կազմակերպվել է գորահավաքի աշխատանքներ:  
Հաճախակի կազմակերպվում են հանդիպումներ համայնքի բնակիչների և սահմանապահ ուղեկալների հրամանատարության միջև:

Սոցիալական ծառայության բնագավառում

Աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին: Թվո 6 անապահով ընտանիքների տրվել են դրամական օգնություն՝ ընդամենը 620.0 հազար դրամի չափով: Համայնքի բնակչությունից թվով տասնչորս մահացածների համար գնվել են ծաղկնախակներ՝ ընդհանուր գումարով 360.0 հազար դրամի չափով: Մարտի 8-ի և ապրիլի 7-ի տոների կապակցությամբ գնվել են նվերներ՝ ընդհանուր գումարով երեք հարյուր հիսուն հազար դրամի: Սահմանապահների օրվա՝ մայիսի 28-ի կապակցությամբ համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 2 ուղևորների համար գնվել են նվերներ՝ ընդհանուր գումարով մեկ հարյուր քառասուն հազար դրամի: Համայնքում իրականացվել են լուսավորման ցանցի աշխատանքներ՝ ընդհանուր գումարով մեկ միլիոն հինգ հարյուր ութսուն հազար դրամի չափով:

Գյուղատնտեսության բնագավառում

Կազմակերպվել են գարնանացան, պարարտացման և ոռոգման աշխատանքներ և պետության կողմից տրված պարատանյութը բաշխել է համայնքի բնակիչներին: Կազմակերպվել են ցրտահերկի աշխատանքներ: Սկսել ենք ոռոգման նպատակով արտևոցյան հորերի հորատման աշխատանքներ:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Համայնքի բյուջեի հաշվին կատարվել է աղբահանություն՝ շուրջ 120.0 հա բնակավայրի տարածքից, որի համար համայնքի բյուջեից ծախսվել է 1100.0 հազար դրամ գումար:

Համայնքի հիմնախնդիրներ

Համայնքի հիմնախնդիրները այսօր էլ մնում են.

1. Համայնքի գազաֆիկացումը,
2. Ոռոգման ջրի անբավարարությունը,
3. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը,
4. Դպրոցի և մշակույթի տան վերանորոգումը:
5. Ներհամայնքային ճանապարհների նորոգում:

Արարս համայնքի ղեկավար՝



Ա. Միրանյան